ՀԱՂՈՐԴՈՒՄ

ՀԱՄՈ ԿԱՐԵՆԻ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ
պ.գ.թ., դոցենտ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստտիտուտի ավագ գիտաշխատող
ՆԱՐԻՆԵ ՍՏԵՓԱՆԻ ԵՐԱՆՈՍՅԱՆ
պ.գ.թ. , ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտաշխատող

ԽՈՐՀՐԴԱՀԱՅ ԵՐԳԻԾԱՆՔԻ ՆՎԻՐՅԱԼԸ. ԷԴՈՒԱՐԴ ԽՈՃԻԿ*

Հայ հասարակական մտքի պատմության յուրօրինակ էջերից է Խորհրդային Հայաստանի երգիծական մամուլը, որի պատմությունը պայմանականորեն կարելի է բաժանել երկու փուլի: Առաջինը 1920-ականներն են, երբ հաջորդաբար լույս տեսան երեք սակավակյաց պարբերականներ՝ «Շեշտ»-ը, «Զուռնա»-ն և «Կարմիր մոծակ»-ը: Սա հիմնականում կարելի է բնորոշել իբրև երգիծական մամուլի սկզբնավորման և խոչընդոտների հաղթահարման շրջան: Երկրորդ փուլը սկսվում է 1954 թ., երբ 27-ամյա հարկադիր դադարից հետո հանրապետությունում սկսեց հրատարակվել հաջորդ երգիծաթերթը՝ «Ոզնի»-ն:

Խորհրդային Հայաստանում երգիծական պարբերական հրատարակելու առաջնության պատիվը պատկանում է հայ անվանի գրող և հրապարակախոս Վահան Թոթովենցին: Վերջինիս խմբագրությամբ 1923 թ. հունիսի 3-ից մինչև հուլիսի 23-ը Երևանում լույս է տեսել «Շեշտ» երգիծական պարբերականը[1]:

Հայաստանի խորհրդայնացմանը հաջորդող շրջանում երգիծական պարբերականներ հրատարակելու բնագավառում գործուն մասնակցություն ցուցաբերած հաջորդ անձը Էդուարդ Մամասի Խոճիկն (Խոճիկյան) է: Չափազանց հարուստ ու բազմաբնույթ է նրա կենսագրությունը:

Է. Խոճիկը ծնվել է 1900 թ. Թիֆլիսում՝ արհեստավորի ընտանի-

* Հոդվածն ընդունվել է տպագրության 17.02.2019:

1 Տե՛ս Երանոսյան Ն., Սուքիասյան Հ., Երգիծական մամուլի սկզբնավորումը Խորհրդային Հայաստանում. «Շեշտ» երգիծաթերթը, «Հայագիտության հարցեր», Երևան, 2018, N 2, էջ 174-181:

քում: Նախնական կրթություն ստանալուց հետո՝ 1918-1921 թթ., սովորել և ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը: Այստեղ էլ ապագա երգիծաբանը կատարել է առաջին գրական քայլերը: 1918 թ. գարնանը նա մասնակցել է Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի փոստ-հեռագրական սեկցիայի կազմակերպած փոստ-հեռագրական դասընթացներին՝ ստանալով հեռագրիչի կոչում (վկայականը ստացել է 1918 թ. մայիսի 23-ին): Այնուհետև աշնանը Թիֆլիսում հաշվապահություն է ուսանել հաշվապահության ուսուցիչ Գ. Կ. Տեր-Դավիդյանցի մոտ (ավարտական վկայականը ստացել է հոկտեմբերի 14-ին)[2]:

Հայտնի է, որ սոցիալ-դեմոկրատների դարբնոց Ներսիսյան դպրոցում խոր արմատներ ունեին բոլշևիկները: Երիտասարդ տարիքում Է. Խոձիկը ևս տարվել է սոցիալիստական գաղափարներով: 1919 թ. նա հանդիսացել է Թիֆլիսի երիտասարդ կոմունիստների «Սպարտակ» միության անդամ, հեղափոխական գործունեության համար 1920 թ. ամռանը Հայաստանի Հանրապետությունում ձերբակալվել է և արտաքսվել Թիֆլիս[3]:

1921 թ. փետրվարին Վրաստանի խորհրդայնացումից հետո Է. Խոձիկը նպատակադրվեց ուսումնառության մեկնել Մոսկվա: Թիֆլիսի Ստեփան Շահումյանի անվան հայկական դրամատիկական խմբի վարիչ և ռեժիսոր Լևոն Քալանթարը 1921 թ. մայիսի 19-ին Թիֆլիսում ՀՍԽՀ լիազոր ներկայացուցիչ Դանուշ Շահվերդյանին գրում էր, որ Էդուարդ Խոձիկյանը ցանկանում է Մոսկվա մեկնել՝ թատերական արվեստ ուսումնասիրելու նպատակով: Նա երաշխավորել է և խնդրել աջակցել Խոձիկին[4]: 1921 թ. մայիսի 30-ին Թիֆլիսի Հայարտան կողմից Խոձիկին տրված վկայականում նշված է, որ նա մեկնում է Մոսկվա՝ բեմական արվեստ սովորելու նպատակով[5]: Մոսկվայում ՀՍԽՀ լիազոր ներկայացուցիչ Սահակ Տեր-Գաբրիելյանի միջնորդությամբ հուլիսին Խոձիկն ընդունվեց Մոսկվայի Արևելքի աշխատավորների կոմունիստական համալսարան, որտեղ և ծանոթացավ անվանի բա-

2 Ե. Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), Էդուարդ Խոձիկի ֆոնդ, գ. 256:

3 Նույն տեղում, գ. 263, թ. 1-4, Հայաստանի պրոլետար գրողների ասոցիացիայի ֆոնդ, գ. 796, թ. 1:

4 Նույն տեղում, Էդուարդ Խոձիկի ֆոնդ, գ. 327, թ. 1, գ. 328, թ. 1:

5 Նույն տեղում, գ. 256:

նաստեղծ եղիշե Չարենցի հետ: Հիվանդության պատճառով ուսումը կիսատ թողնելով՝ Խոճիկը ստիպված Մոսկվայից վերադարձավ Թիֆլիս[6]: Մասնավորապես 1921 թ. սեպտեմբերի 13-ին Մոսկվայում ՀՍԽՀ լիազոր ներկայացուցչության կողմից Է. Խոճիկյանին տրված վկայականում նշվում էր, որ նա Երևան է գործուղվում իբրև դիվանագիտական ցրիչ՝ իր հետ տանելով գաղտնի փոստը (12 փաթեթ գաղտնի գրագրություն)[7]:

Թիֆլիս վերադառնալուց հետո՝ մինչև 1922 թ. գարուն, Խոճիկն աշխատել է տեղի «Կարմիր աստղ» թերթի խմբագրությունում[8]: 1921 թ. դեկտեմբերի 12-ին Խոճիկին տրված վկայականի համաձայն նա հանդիսանում էր Վրաստանի արևմտահայերի աշխատավորական բյուրոյի գեղարվեստական մասի վարիչը[9]:

1922 թ. Թիֆլիսից Երևան տեղափոխվելուց հետո Խոճիկը 1922–1924 թթ. եղել է ՀԿ(բ)Կ կենտկոմի գրադարանի վարիչը, միաժամանակ պաշտոնավարելով իբրև ՀԼԿԵՄ մշակույթի բաժնի վարիչ[10]: 1922–1924 թթ. նա սովորել է Երևանի պետական համալսարանում, սակայն ուսումը կիսատ է թողել: Ուսումնառության սկզբում՝ 1922 թ. տարեվերջին, համալսարանում կազմակերպել է առաջին անաստվածական բջիջը, ինչի մասին 1960 թ. գրած ինքնակենսագրությունում նա հպարտությամբ էր շեշտում և հատուկ ընդգծում, որ հետագայում այն հիմք է հանդիսացել «Անաստված» հակակրոնական միության կազմակերպման համար[11]: 1923 թ. կազմակերպումից անմիջապես հետո նա անդամակցել է Խորհրդային Հայաստանի պրոլետարական գրողների միությանը[12]:

Է. Խոճիկի խմբագրությամբ 1924 թ. մարտին Երևանում հրատարակվեց «Զուռնա» երգիծական հանդեսի առաջին (նաև միակ) համարը: Նա դեռևս 1923 թ. վերջից նախապատրաստվում էր պարբերականի լույսընծայմանը: Ասվածի վկայությունն է նրա նոթատետրում առկա ««Օրագրություն «Զուռնայի», 1 հունվարի 1924 թ.» խորագրով

6 Նույն տեղում, գ. 250, թ. 2:
7 Նույն տեղում, գ. 256:
8 Նույն տեղում, գ. 263, թ. 1-4:
9 Նույն տեղում, գ. 256:
10 Նույն տեղում, գ. 263, թ. 1-4:
11 Նույն տեղում, գ. 250, թ. 3:
12 Նույն տեղում, գ. 257:

գրառումները (ի դեպ, սա հրատարակված չէ երգիծաթերթի տպագրված համարում), որտեղ Նոր տարվա առթիվ «Զուռնա»-ն իր զիլ կանչով շնորհավորում էր բոլորին, հատկապես «ի պաշտոնե հերթապահներին՝ միլիցիոներներին, ՉՕՆ-ի[13] և զինվորական պահակներին, տելեֆոնիստներին, և այլն, և այլն...»[14]: Նոթատետրում պահպանվել են նաև մի շարք գրական գործիչների մասին հրատարակման ենթակա երգիծական պատմություններ:

Նախապատրաստական աշխատանքից և ամսագրի անդրանիկ համարը պատրաստելուց հետո Է. Խոճիկը 1924 թ. մարտի 7-ին դիմեց ՀՍԽՀ քաղաքական լուսավորության գլխավոր վարչությանը (վերջինի կազմում էր գործում Հայգլավլիտը)՝ խնդրելով թույլատրել հրատարակել «Զուռնա» երկշաբաթյա երգիծաթերթի առաջին համարը: Նա դիմումում ներկայացրեց հրատարակման ենթակա նյութերի ցանկը, որոնք տպագրության ժամանակ մասնակի խմբագրվել են: Դրանք են՝ «Փչի, զուռնա», «Հիմնարկի կառքը», «Ապահովագր[ական] կասսա», «Երկունք», «Ֆուտուրիստի մրմունջը», «Ողջույնոզուռնա», «Գևորգ աղան», «Ա. Բադունի», «Մասսաներ», «Լուրեր», «Մամուլ», «Հայտարարություններ»[15]:

«Զուռնա»-ն բաղկացած էր 16 էջից, հարուստ էր գունավոր երգիծանկարներով: Իբրև հրատարակիչ նշված է ՀԿ(բ)Կ կենտկոմի և Պետհրատի էքսպեդիցիան, տպագրվել էր Տպագրական տրեստի երկրորդ տպարանում՝ 1000 տպաքանակով: Թերթում տպագրված նյութերի հիմնական մասի հեղինակը խմբագիր Խոճիկն է: Այստեղ տպագրվել են նաև Դերենիկ Դեմիրճյանը, Լեռ Կամսարը, Գուրգեն Մահարին («Գուրիս»), Աթաբեկ Խնկոյանը («Յուվենալ»), «Հ»-ը, «Ս. Թ. Ալվոդը», «Տավուշցին»[16]:

Աղբյուրների սակավության պատճառով դժվար է վերջնականապես պարզել, թե ինչ պատճառով է անդրանիկ համարի հրատարակությունից հետո «Զուռնա»-ի լույսընծայումը դադարեցվել: Ինչպես ժամանակի խորհրդային շատ պարբերականների դեպքում, բացառված չէ, որ ընդհատման հիմնական դրդապատճառ կարող էր լինել

13 Կոմկուսի անդամներից կազմված հատուկ նշանակության ջոկատներ:

14 ԳԱԹ, Էդուարդ Խոճիկի ֆոնդ, գ. 265:

15 Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 122, ց. 1, գ. 763, թ. 31:

16 «Զուռնա», Երևան, 1924, մարտ, N 1:

ֆինանսական միջոցների անբավարարությունը: Չի բացառվում նաև գրաքննական մարմինների միջամտության տարբերակը, քանի որ թերթում նրանց «ուշադրությունը գրավող» ուղղակի և անուղղակի ակնարկներ կային:

«Զուռնա»-ի տպագրության ընդհատումից հետո Խոճիկը ուսման նպատակով մեկնեց Մոսկվա, ուր սովորեց և ավարտեց Պետական դրամատիկական ստուդիան՝ ստանալով դերասան-ռեժիսորի որակավորում[17]:

1925 թ. ամռանը վերադառնալով Երևան՝ նա աշխատանքի անցավ ՀԿ(բ)Կ կենտկոմի «Հայաստանի աշխատավորուհի» ամսագրում՝ իբրև պատասխանատու քարտուղար[18]: Սակայն անհանգիստ Խոճիկը չէր մոռացել ընդհատված պարբերականի վերահրատարակման մասին: Մանավանդ որ Մոսկվայում արդեն ծանոթացել էր ռուսական երգիծաթերթերին, դրանց նկատմամբ ընթերցող հանրության ոգևորիչ վերաբերմունքին:

Նրա ջանքերի արդյունքում 1926 թ. մարտին Երևանում սկսեց լույս տեսնել «Զուռնա»-ի իրավահաջորդ «Կարմիր մոծակ» երգիծական թերթը: Պարբերականի անդրանիկ համարի նախնական տարբերակը պատրաստելուց հետո, համաձայն գործող կարգի, Է. Խոճիկը 1926 թ. մարտի երկրորդ կեսին դիմեց Հայգլավլիտին՝ երգիծական երկշաբաթաթերթ (խմբագիրներ՝ Արամայիս Երզնկյան և Էդուարդ Խոճիկ) հրատարակելու խնդրով: Դիմումատուն ընդգծում էր, որ պարբերականի նպատակը լինելու է Խորհրդային Հայաստանի իրականության բացասական կողմերը խարազանելը (դրա ապացույցն էր նաև նորաստեղծ թերթի անվանումը)՝ «ամրապես կանգնած լինելով խորհրդային դիրքորոշման վրա»: «Կարմիր մոծակ»-ի առաջնային խնդիրներից էր հայտարարվում արտասահմանի հակախորհրդային ուժերին (առանձնապես դաշնակցականներին, էսէռներին ու մենշևիկներին) «սուր ծաղրի» ենթարկելը[19]: Այլ կերպ չէր կարող լինել, որովհետև իրական չեզոք պարբերականի հրատարակությունը թույլ չէր տրվի, իսկ ընդդիմադիր հրատարակության մասին խոսք անգամ չէր կարող լինել:

«Կարմիր մոծակ»-ի համարների ուսումնասիրությունից հստակ

17 ԳԱԹ, Էդուարդ Խոճիկի ֆոնդ, գ. 263, թ. 1-4:

18 Նույն տեղում, գ. 257:

19 ՀԱԱ, ֆ. 1, ց. 6, գ. 265, թ. 30:

երևում է, որ այն ուշադիր էր և արագ արձագանքում էր ինչպես խորհրդային իրականությանը բնորոշ բացասական երևույթներն, այնպես էլ տիպիկ հայ իրականության իրադարձություններն էր ներկայացնում ու մեկնաբանում՝ «խայթելով» երևացող և աներևույթ անհարթ անկյունները:

«Կարմիր մոծակը», ըստ երևույթին, շատ էր ջանացել խորհրդային իրականության արատների իր փնտրտուքում և, ի թիվս մեծ ու պախարակելի երևույթների, տեսել էր նաև խորհրդային հասարակության աչքին սպիտակ ներկայացվող, սև կողմերը: Այս հանգամանքը դատավճռի նշանակություն ունեցավ պարբերականի համար. 1927 թ. հունվարին 5-րդ համարի հրատարակությունից հետո նրա տպագրությունն ընդհատվեց: Պարբերականի հրատարակությունը դադարեցվեց այն ժամանակ, երբ այն ձանաչում էր ձեռք բերել, իր շուրջը խմբել ժամանակի տաղանդավոր երգիծաբաններին, իսկ համարները տարածվում էին ոչ միայն Խորհրդային Հայաստանում, այլև նրա սահմաններից դուրս: Այն Խորհրդային Միության սահմաններում հրատարակվող միակ հայալեզու երգիծաթերթն էր[20]: «Կարմիր մոծակ»-ի ընդհատումից հետո Խորհրդային Հայաստանում ավելի քան քառորդ դար երգիծական պարբերական չի հրատարակվել:

Երգիծաթերթի հրատարակությունը վերսկսելու ջանքերին զուգահեռ՝ 1927 թ. փետրվարի 20-ին Հայաստանի արհեստակցական միությունների խորհրդի (ՀԱՄԽ) «Աշխատանք» երկշաբաթաթերթի վերահրատարակությունից հետո Է. Խոճիկը սկսեց աշխատակցել թերթին: Կարծում ենք, ըմբոստ Խոճիկի՝ «Աշխատանք» տեղափոխվելն ամենևին պատահական չէր: Վերջինի խմբագիր, հետագայում հայ

20 Մանրամասն տե՛ս Սուքիասյան Հ., Երանոսյան Ն., «Կարմիր մոծակ» երգիծաթերթը և խորհրդահայ գրաքննությունը, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2018, N 2, էջ 121-134:

21 Հայգլավլիտի՝ 1927 թ. մայիսի 18-ով թվագրվող «գաղտնի» նշագրումով զեկուցագրում ընդգծվում էր, որ «Հ. Պետրոսյանը բացահայտորեն ձգտում է այդ թերթն ազատել գրառեպգլխվարի գրաքննությունից», գրաքննիչի վրա «հոգեկան ճնշում գործ դնելու նպատակով» հայտարարում, թե պարբերականի նյութերը նախապես համաձայնեցնում են ՀԿ(բ)Կ կենտկոմի քարտուղար Պյոտր Կուզնեցովի հետ (վերջինս 1924–1927 թթ. հանդիսանում էր ՀԱՄԽ-ի նախագահը): Պարբերականը գրաքննությունից ազատելու հարցով «Աշխատանք»-ի խմբագրությունը դիմել էր ՀԿ(բ)Կ կենտկոմի մամուլի բաժնին, Հայգլավլիտին, սակայն մերժում էր ստացել (ՀԱԱ, ֆ. 122, ց. 3 (2ա), գ. 7, թ. 113):

մամուլի մատենագիտության հետազոտող Հովհաննես Պետրոսյանը թերթը գրաքննությունից ազատելու անհաջող փորձեր էր կատարում[21]:

1927 թ. գարնանից Խոձիկն աշխատանքի անցավ «Խորհրդային Հայաստան» պաշտոնաթերթում՝ իբրև «շրջուն թղթակից», հոկտեմբերից՝ իբրև կինոյի, ներկայացումների, երեկույթների, համերգների գրախոս[22]: Այնուհետև նույն թերթում տպագրվում էր իբրև ֆելիետոնիստ (դա այն շրջանն էր, երբ Լեո Կամսարի գործերը հազվադեպ էին լույս տեսնում մամուլում):

1927 թ. հուլիսի 20-ից «Աշխատանք» շաբաթաթերթը սկսեց հրատարակվել «Հերմես» մասնավոր հրատարակչության տպարանում: Օգտվելով այս հանգամանքից՝ Է. Խոձիկը փորձեց երկշաբաթաթերթի և «Հերմես»-ի միջոցով կյանքի կոչել երգիծական մատենաշար հրատարակելու իր ծրագիրը: «Աշխատանքի» գրադարան» մատենաշարով նա 1927 թ. «Հերմես»-ում երգիծական բնույթի փոքրածավալ գրքույկներ է հրատարակել: Մեզ հայտնի է այդպիսի 12 գրքույկ: Դրանցից առաջինն ունի «Կրիտիկո-ծիծաղ» խորագիրը, որի հեղինակը մեզ քաջ ծանոթ Վահան Թոթովենցն էր[23]:

Այնուհետև Խոձիկը հանդիսացել է «Անաստված» թերթի պատասխանատու քարտուղար, Պետական թատրոնի գեղարվեստական խորհրդի քարտուղար, Կուլտուր-պատմական թանգարանի թատերական բաժնի վարիչ, Երևանի քաղաքային խորհրդի կոմունալ թանգարանի վարիչ, Հայֆիլհարմոնիայի գրական բաժնի վարիչ, Հայպետհրատի գեղարվեստական բաժնի վարիչ, Հայրենական պատերազմի տարիներին և հետպատերազմյան շրջանում՝ ժողկոմխորհի (1946 թվականից՝ Մինիստրների խորհուրդ) արվեստի գործերի վարչության խաղացանկային հանձնաժողովի քաղաքական խմբագիր և այլն: Ավելին՝ «անաստված» Խոձիկը 1955 թ. եղել է ազգային-եկեղեցական ժողովի պատգամավոր[24]:

Այս ողջ ընթացքում Խոձիկը շարունակել է ստեղծագործել, գործուն կերպով աշխատակցել հանրապետության բազմաթիվ թերթերի ու ամսագրերի՝ տպագրվելով «Այդ ես եմ», «Այդ ես չեմ», «Էդ Խո» և

22 ԳԱԹ, Էդուարդ Խոձիկի ֆոնդ, գ. 256:

23 Թոթովենց Վ., Կրիտիկո-ծիծաղ, «Աշխատանքի գրադարան N 1», Երևան, «Հերմես», 1927, 8 էջ:

24 ԳԱԹ, Էդուարդ Խոձիկի ֆոնդ, գ. 256, 257, Թատերական բաժին, Էդուարդ Խոձիկի ֆոնդ, գ. 4:

այլ ծածկանուններով, հրատարակել բազմաթիվ ֆելիետոններ, երգիծական և այլ ժանրերի գործեր: Սակայն նա նվիրական գործ էր համարում երգիծական պարբերական հրատարակելը, ինչի վառ ապացույցն է նաև այն, որ Հայրենական պատերազմի տարիներին (1941–1945 թթ.) բնակչության ռազմահայրենասիրական դաստիարակության նպատակով Երևանում լույս տեսնող «Ագիտ-պատուհան»-ը խմբագրելու առաքելությունը ևս ստանձնել էր Խոճիկը: Այդ հայրենանվեր գործի համար նա երկու անգամ պարգևատրվել է «Կովկասի պաշտպանության համար» մեդալով[25]: Իսկ արդեն 1954 թ. Երևանում «Ոզնի» երգիծաթերթի հրատարակությունից հետո Խոճիկը՝ իբրև բաժնի վարիչ[26], իր բազմամյա փորձը, ուժն ու եռանդը ծառայեցրեց պարբերականի կայացմանը: Եվ ամենևին պատահական չէ, որ որոշ ժամանակակիցներ «Ոզնի»-ն իրավամբ «Կարմիր մոծակ»-ի իրավահաջորդն են համարում:

Ժամանակակիցների վկայությամբ՝ Հ. Պարոնյանի հանդեպ պաշտամունքի հասնող սերը Է. Խոճիկին ուղեկցել է ամբողջ կյանքում: Նա ջանքեր է գործադրել մեծանուն երգիծաբանի ստեղծագործությունները տպագրելու, հանրայնացնելու, տարածելու նպատակով[27]: Երբ 1930-ականների սկզբին ՀՍԽՀ Գիտության և արվեստի ինստիտուտը ձեռնամուխ եղավ Պարոնյանի երկերի լիակատար ժողովածուի հրատարակմանը[28], այդ առթիվ Խոճիկին դիմեց Պետհրատի գրական բաժնի վարիչ Ե. Չարենցը՝ խնդրելով իր մոտ եղած նյութերը փոխանցել ինստիտուտին[29]: Կամ՝ 1940 թ. Հայաստանի գրողների միության քարտուղարությանն ուղղված դիմումում հիշեցնելով, որ 1941 թ. լրանում է, ինչպես նա է բնորոշում, «հայ գրականության խոշորագույն դեմքերից մեկի, սոցիալ-դեմոկրատ, հանճարեղ Հակոբ Պարոնյանի» մահվան 50-ամյակը, իսկ հաջորդ տարի՝ ծննդյան հարյուրամյակը,

25 ԳԱԹ, Էդուարդ Խոճիկի ֆոնդ, գ. 263, թ. 1-4:

26 Նույն տեղում, գ. 257:

27 «Ջահակիր», Կահիրե, 12 օգոստոսի 1971, N 391:

28 Պարոնյան Հ., Երկերի լիակատար ժողովածու, հ. 1-11, Երևան, 1931-1948:

29 ԳԱԹ, Էդուարդ Խոճիկի ֆոնդ, գ. 209: Այդ նյութերը մեծանուն երգիծաբանի հրատարակած «Խիկար»-ի երկու տարիների համարներն էին, որը Առաջին աշխարհամարտի ավարտական փուլում Խոճիկը գտել էր Արևմտյան Հայաստանում (Մադոյան Գ., Էդուարդ Խոճիկ, «Հանդես Երևանի համալսարանի», Երևան, 1997, N 3, էջ 95):

Խոճիկն առաջարկում էր հավուր պատշաճի տոնել այդ հոբելյանները[30]:

Է. Խոճիկը, ինչպես իր ժամանակի շատ մտավորականներ, բարվոք նյութական-կենցաղային պայմաններում չի ապրել: Վեց անձից բաղկացած նրա ընտանիքը (ինքը, կինը, որդին, մայրը, քույրը, կնոջ մայրը) 1946 թ. բնակվում էր մեկ սենյականոց բնակարանում[31]: Հաջորդ տարիներին ևս նրա նյութական վիճակը չի բարելավվել. այս մասին կարդում ենք 1954 թ. հունիսի 8-ին Անաստաս Միկոյանին ուղղված նրա խնդրագրում[32]: Տարիներ անց միայն Խոճիկը նոր բնակարան ստացավ:

Տաղանդավոր երգիծաբանն ու հասարակական գործիչը, որը կյանքի վերջին տարիներին կորցրել էր տեսողությունը, մահկանացուն կնքել է 1961 թ., Երևանում: Ժամանակակիցները նրա մասին գրած հուշ-ակնարկներում ջերմ խոսքերով են հիշել անհանգիստ, իր ողջ ժամանակը գրական-հասարակական աշխատանքներին նվիրած, ամբողջ կյանքում մեծանուն երգիծաբան Հակոբ Պարոնյանի գրական ժառանգության նկատմամբ ակնածանք ունեցող Էդուարդ Խոճիկին[33]:

Վահան Թոթովենցն ու Էդուարդ Խոճիկը հանդիսացել են ոչ միայն իրար շարունակող երգիծական պարբերականների հիմնադիր-խմբագիրներ, այլև մտերիմներ ու համախոհներ: Մեկ ուշագրավ հանգամանք. երգիծական պարբերականների հանդեպ պետության չհանդուրժող վերաբերմունքն արտացոլվել է և՛ Վ. Թոթովենցի և՛ Է. Խոճիկի ինքնակենսագրություններում:

Առաջին հայացքից զարմանալի զուգադիպությամբ, սակայն խորհրդային ժամանակների իրողությունների համատեքստում՝ օրինաչափորեն, Վ. Թոթովենցը 1926 և 1936, իսկ Է. Խոճիկը 1960 թվականին գրած ինքնակենսագրություններում խուսափել են հիշատակել իրենց հրատարակած համապատասխանաբար՝ «Շեշտ» և «Զուռնա»

30 ԳԱԹ, Էդուարդ Խոճիկի ֆոնդ, գ. 104, թ. 1:

31 Նույն տեղում, գ. 263, թ. 1-4:

32 Նույն տեղում, գ. 18ը., թ. 1-2:

33 Տե՛ս Арутчян С., Таким он был... (К 70-летию со дня рождения Эдуарда Ходжика), "Коммунист", Ереван, 28 апреля 1971, N 98, Մելիքսէթեան Ս., Մշակոյթի պատուիրակը, «Ջահակիր», Կահիրե, 12 օգոստոսի 1971, N 391, Մադոյան Գ., նշվ. աշխ., էջ 95-98: Նաև՝ Անմոռաց դեմքեր. Ներսիսյան դպրոցի սաները, Երևան, 1965, էջ 242-244:

ու «Կարմիր մոծակ» երգիծական պարբերականների մասին[34]: Այդ իրողությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ նրանց հրատարակած երգիծաթերթերը, չնայած իրենց գործունեության մեջ չափազանց կարևոր տեղ են զբաղեցրել, ինքնակենսագրություններում շրջանցվել են՝ միմիայն իշխանությունների համար անցանկալի լինելու և դրանց հրատարակությունը դադարեցված լինելու պատճառով: Այս իրողությունը ոչ համարձակ ակնարկներով արտացոլվել է խնդրո առարկա երգիծաթերթերում:

Խորհրդային ժամանակների գործիչների շրջանում տարածված երևույթ էր անցյալը մոռացության մատնելը և «խորհրդային քաղաքացու» ինքնակենսագրություն գրելը, այն է՝ իրենց կենսագրության՝ իշխող գաղափարախոսության տեսակետից ոչ նպաստավոր էջերի շրջանցումը կամ կեղծումը, կուսակցական-հեղափոխական գործունեության (առանձնապես՝ քաղաքացիական կռիվներին մասնակցության) շեշտադրումը և այլն: Նույնիսկ ճանաչված և մեծ հեղինակություն վայելող անհատներն առավել հաճախ գերադասում էին մոռացության մատնել իրենց անցյալի որոշ դրվագներ, խուսափում մինչև խորհրդային կարգերի հաստատումն իրենց ոչ հեղափոխական բնույթի գործունեության մասին բարձրաձայնելուց:

Բանալի բառեր. - երգիծանք, մամուլ, Էդուարդ Խոճիկ, պատմական փուլեր:

Амо Каренович Сукиасян
Нарине Степановна Ераносян

Преданный приверженец советской армянской сатири: Эдуард Ходжик

Резюме

Эдуард Ходжик (1900-1961) внес большой вклад в публикацию сатирических периодических изданий в Советской Армении. Свои первые литературные шаги он сделал в годы учебы в Тифлисской Нерсисяновской школе.

Под редакцией Э. Ходжика в марте 1924 года в Ереване был издан первый (и последний) номер сатирического журнала "Зурна". Спустя два года в марте 1926 года под редакцией Ходжика начала издаваться сатирическая газета

34 ՀԱԱ, ֆ. 122, ց. 5, գ. 13, թ. 2, ՊԱԹ, Վահան Թոթովենցի ֆոնդ, գ. 370, թ. 4-6, Էդուարդ Խոճիկի ֆոնդ, գ. 250, թ. 1-5:

"Кармир моцак" ("Красный комар") которая открыла новую страницу в истории советской армянской сатиры. Издание просуществовала менее одного года. В январе 1927 года, после выпуска пятого номера издание газеты прервалось. После прекращения издания сатирической газеты Ходжик корреспондентировал издающиемся в республике многочисленной периодической печати. В годы Отечественной войны ему было доверено редактирование издающиеся в Ереване "Агит-патуан"-а ("Агит окно"). А уже в 1954 году в Ереване после издания сатирической газеты "Возни" ("Ежик") Ходжик, как заведующий отделом весь свой многолетний опыт, силу и энергию внес в дело становления этого журнала.

Ключевые слова: сатира, пресса, Эдуард Ходжик, исторические сцены.

Hamo K. Sukiasyan
Narine S. Yeranosyan

Devotee of the soviet armenian humor. Eduard Khochik

Summary

Eduard Khojik (1900-1961) has made a great contribution to publishing satirical periodicals in Soviet Armenia. He made his first literary steps during his studies at Nersisyan School in Tbilisi.

In edition of E. Khojik In March 1924 the first (and only) number of satirical magazine "Zurna" was published in Yerevan. Two years later, in March, 1926 he started publishing the magazine "Karmir motsak" ("Red Mosquito"), which opened a new page in the history of soviet armenian satire. The magazine had less than a year of life. In January, 1927 printing was interrupted after publication of the fifth issue. After the interrption of the publication of the satirical magazine, Khojik has corresponded to many periodicals published in the republic. In the years of the Patriotic war, he was entrusted with the editing of "Agit-Window", published in Yerevan. In 1954 when the satirical magazine "Vozni" ("Hedgehog") was published in Yerevan, Khojik, as the head of one of the departments, served his many years of experience, strength and energy to the formation of the journal.

Keywords: satire, press, Eduard Khochik, historical stages